«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Հայոց լեզու (7-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս
չորս ծագերուն...

Մուշեղ Իշխան

1. **Սիրելի՛ բարեկամ, ուշադի՛ր կարդա տեքստը. հեղինակը Լեոնարդո դա Վինչին է:**

Զառամյալ երկու հոպոպներ՝ վարուժան ու մարի, մի օր զգացին, որ արդեն չեն կարող բնից թռչել, հեռանալ: Տկար աչքերով երկուսն էլ տեսնում էին լոկ ծխավուն պղտորություն:

Բայց մեկ էլ եկան ջահել հոպոպները, հավաքվեցին հայրական բնում և գործի անցան: Ոմանք անհապաղ սկսեցին նոր, ավելի տաք կացարան հյուսել, ուրիշները թռան որդ ու բզեզ որսալու, մնացածները թևեցին անտառի կողմը՝ կուրությունը բուժող խոտ որոնելու: Շուտով ձագերը ծնողներին հոգատարությամբ փոխադրեցին նոր բնակարան:

Բոլոր ուստրերն ու դուստրերը ձեռնամուխ եղան հրաշագործ դեղաբույսի հյութով հիվանդներին դարմանելու գործին: Հոպոպները համբերատար կերպով փոխարինում էին մեկմեկու՝ ոչ մի րոպե մենակ չթողնելով ծնողներին:

2. Քո կարծիքով այս նախադասություններից ո՞րը կարող է դառնալ տեքստի ավարտը: Օղակի մեջ վերցրո՛ւ ընտրածդ նախադասության համարը /1 միավոր/:

ա) Որդիական երախտիքը և սերը դարմանեցին ծնողներին:

բ) Որդիական երախայրիքը և սերը դարմանեցին ծնողներին:

գ) Որդիական երախտագիտությունը և սերը դարմանեցին ծնողներին:

3. Տրված բառակապակցությունները տեքստի մի քանի բառերի բացատրությունն են: Ընտրի՛ր տեքստից տվյալ բացատրությանը համապատասխանող բառը, գրի՛ր դրա կողքին: Մնացած բառակապակցություններին համապատասխան բառերն էլ դու ինքդ գտի՛ր և գրի՛ր /4 միավոր/ :

Էգ ձի, էգ թռչուն, արու ձի, արու թռչուն, էգ ոչխար, արու ոչխար, արու զավակ, արու այծ:

.....
.....
.....
.....

4. *Դարմանել, զառամյալ* բառերի երկուական հոմանիշ և երկուական հականիշ բառե՛րը գտիր և գրի՛ր /2 միավոր/:

.....
.....
.....

5. Տեքստում կան *արմատ + ա + արմատ* բանաձևին համապատասխանող բառեր, դո՛ւրս գրիր, վերլուծի՛ր բառակազմորեն /3 միավոր/:

.....
.....
.....
.....

6. ***<u>Ջահել, պղտոր</u>*** **բառերը ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածի՛ր բառակապակցությունների մեջ /2 միավոր/:**

—----------
---

7. Տեքստի երկրորդ նախադասությունից դո՛ւրս գրիր դիմավոր բայը, դարձրո՛ւ հրամայական եղանակի ժամանակաձևեր (եզակի և հոգնակի, դրական և ժխտական՝ արգելական հրամայական ձևեր) / 2 միավոր/:

——
——
——
——

8. Ըստ տեքստի՝ հորինի՛ր զավակ հոպոպների երկխոսությունը միմյանց հետ /6 միավոր/:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____